ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 01 2020թ.
№ 2/1/1/38

«Տեսակենտրոն» ՍՊԸ (ՀՎՀՀ 00005974) տնօրեն
Ա. Սնխչյանին
հասցե՝ ք. Երևան, Կասյան փողոց 12
էլ. հասցե՝ musland@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-26/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2019թ. մինչև հունիսի 30-ը պետք է մատակարարեր 2 հատ Գալարափող և 10 հատ Ֆլեյտա մեծ «C», սակայն Ձեր ընկերության կողմից մատակարարված երաժշտական փողային գործիքները չեն ընդունվել պատասխանատու ստորաբաժանման կողմից, քանի որ չեն համապատասխանել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին: 2019թ. Հուլիսի 31-ի 2036/ԳՇ գրությամբ՝ Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն, «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությանը հատկացվել է երկու ամիս ողջամիտ ժամկետ՝ մատակարարված «Գալարափող» և Ֆլեյտա մեծ «C» երաժշտական փողային գործիքները Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանող երաժշտական գործիքներով փոխարինելու համար: Սակայն 2019թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ երաժշտական գործիքները չեն փոխարինվել և մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. հունվարի 14-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 514 080 ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, 33 600 ՀՀ դրամը որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 672 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevand Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am